



«Հրահանգային և արհեստագործական»



Empowered lives. Resilient nations.

Ալավերդի քաղաքի փողոցային լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացում

«Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի գլխավոր նպատակն է քաղաքային ներդրումային ծրագրերի և ազգային քաղաքականության իրականացման ճանապարհով Հայաստանի քաղաքներում քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունավետության բարձրացման միջոցով խնայել էներգիան և կրճատել ջերմոցային գազերի արտանետումները, ինչպես նաև ցուցադրել նոր լուսադիոդային տեխնոլոգիաների առավելությունները:

1-ին փուլ՝ Զորավար Անդրանիկի, Սայաթ-Նովայի և Շահումյան փողոցներ, 2015

Ցուցադրական նախագիծն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի, Ալավերդու քաղաքապետարանի և «Հայ-Ֆրանսիական միջմասնագիտական ցանց» ՀԿ-ի միջև ստորագրված մտադրությունների մասին հուշագրի շրջանակներում 2014թ. հուլիսին:

Ցուցադրական փողոցների երկարությունը՝ 1.84 կմ

Ֆինանսավորում՝ ՄԱԶԾ-ԳԷՖ՝ 70%, «Հայ-Ֆրանսիական միջմասնագիտական ցանց» ՀԿ՝ 20%, Ալավերդու քաղաքապետարան՝ 10%

Զորավար Անդրանիկի, Սայաթ-Նովայի և Շահումյան փողոցների ցուցադրական նախագծի լուսավորության համակարգի ցուցանիշները	Նախկինում Բարձր ճնշման նատրիումային և սնդիկային	Ներկայում ԼԵԴ լուսատուներ	Օգուտներ
Լուսատուների քանակը	70	70	
Լուսավորվածության միջին մակարդակը, լյուքս	3.58-7.21	11	Համապատասխանություն նորմերին
Գումարային հզորությունը, կՎտ	20	3.5	Նվազում՝ 16.5
Տարեկան էներգասպառումը, ՄՎտժ	30.9	5.4	Խնայողությունը՝ 25.5
Տարեկան ջերմոցային գազերի արտանետում, տCO ₂	13.7	2.4	Կրճատում՝ 11.3
Շահագործման և սպասարկման տարեկան ծախսեր, ԱՄՆ դոլար	2 693	473	Խնայողություն՝ 2 220

Ցուցադրական նախագծի իրականացման հիմնական օգուտները

- ✓ Փողոցային լուսավորության համակարգի էլեկտրաէներգիայի սպառումը նվազել է մոտ 82%:
- ✓ Ջերմոցային գազերի տարեկան արտանետումները կրճատվել են 11.3 տCO₂:
- ✓ **էներգաարդյունավետության հատուկ շրջանառու հիմնադրամի ստեղծում** Ալավերդու քաղաքապետարանում:

Միջոցառումներից առաջ



Միջոցառումներից հետո



2-րդ փուլ՝ Թումանյան փողոց, 2016

Ցուցադրական նախագծի 1-ին փուլի իրականացման արդյունքում էներգաարդյունավետության հատուկ շրջանառու հիմնադրամում կուտակված միջոցները օգտագործվել են քաղաքի լուսավորության համակարգի հետագա արդիականացման նպատակով:

Փողոցների ընդհանուր երկարությունը՝ 1 կմ,

Ֆինանսավորում՝ ՄԱՁԾ-ԳԷՖ ծրագիր՝ 50%, Ալավերդու քաղաքապետարան՝ 50%:

Թումանյան փողոցի ցուցադրական նախագծի լուսավորության համակարգի ցուցանիշները	Նախկինում Բարձր ճնշման նատրիումային	Ներկայում ԼԵԴ լուսատուներ	Օգուտներ
Լուսատուների քանակը	42	42	
Լուսավորվածության միջին մակարդակը, լյուքս	3.58-7.21	11	Համապատասխանություն նորմերին
Գումարային հզորությունը, կՎտ	12	2.5	Նվազում՝ 9.49
Տարեկան էներգասպառումը, ՄՎտժ	18.5	3.8	Խնայողությունը՝ 14.7
Ջերմոցային գազերի տարեկան արտանետում, տCO ₂	8.2	1.7	Կրճատում՝ 6.5
Շահագործման և սպասարկման տարեկան ծախսեր, ԱՄՆ դոլար	1 397	289	Խնայողություն՝ 1 107

Ցուցադրական նախագծի իրականացման հիմնական օգուտները

- ✓ Փողոցային լուսավորության համակարգի էլեկտրաէներգիայի սպառումը նվազել է մոտ 79%:
- ✓ Ջերմոցային գազերի տարեկան արտանետումները կրճատվել են 6.5 տCO₂:

Ալավերդի քաղաքում իրականացված երկու նախագծերի արդյունքները

- ✓ Լուսավորության համակարգի արդիականացման արդյունքում տարեկան խնայողությունները կազմում են մոտ՝ **3 327 ԱՄՆ դոլար**:
- ✓ Ջերմոցային գազերի տարեկան արտանետումները կրճատվել են **17.8 տCO₂**:
- ✓ Բարելավվել է ընդհանուր առմամբ **2.8 կմ** ճանապարհային լուսավորության համակարգ:

Այլ առավելություններ

- ✓ Լուսավորվածության մակարդակը և համաչափությունը համապատասխանեցվել են գործող նորմերին, բարձրացնելով անվտանգության մակարդակը,
- ✓ Հիմնվել է էներգախնայողության, լուսավորվածության և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման մշտադիտարկման թափանցիկ համակարգ,
- ✓ Քաղաքի էներգետիկ գործողությունների պլանի մեջ ներառվել է լուսավորության համակարգերի էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումները,
- ✓ Ալավերդի քաղաքում իրականացված ցուցադրական ծրագրերի շրջանակներում ստեղծված էներգաարդյունավետության շրջանառու ֆոնդը շարունակաբար համալրվում է, որի միջոցները կարող են օգտագործվել լուսավորության համակարգի հետագա արդյունավետության բարձրացման համար